12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԷՔՍՏԵՌՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՔԻՄԻԱ

ԹԵՍՏ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Սիրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքը: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:
Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն

1 **Ո՞ր շարքում են բերված երկու պարզ և մեկ բարդ նյութ.**

1) ֆոսֆոր, ծծումբ, քլոր
2) ֆտոր, արծաթ, քացախաթթու
3) ջրածին, կերակրի աղ, շաքար
4) երկաթ, մալաքիտ, երկաթի սուլֆիդ

2 **Համապատասխանեցնել միացության դասը և նյութի բանաձևը:**

ա) աղ	1) FeO
բ) թթու	2) HNO_3
գ) օքսիդ	3) Mg_2N_3
դ) հիմք	4) NaH
	5) $NaOH$
	6) $LiCl$

Ո՞րն է ճիշտ պատասխանների շարքը.

1) ա4, բ2, գ1, դ5
2) ա6, բ2, գ1, դ5
3) ա3, բ5, գ1, դ2
4) ա6, բ2, գ4, դ5

3 **Ո՞ր խառնուրդի բաղադրիչները կարելի է բաժանել թորման եղանակով.**

1) շաքարի ջրային լուծույթի
2) կերակրի աղի ջրային լուծույթի
3) ամոնիումի նիտրիտի ջրային լուծույթի
4) քացախաթթվի ջրային լուծույթի

4 **Ո՞ր հալոգենի միացություններն են կարգավորում մարդու կենտրոնական նյարդային համակարգը.**

1) քլորի
2) բրոմի
3) յոդի
4) ֆտորի

5 **Ինչպե՞ս են արդյունաբերության մեջ ստանում թթվածին.**

1) կրաքարի քայքայմամբ
2) նատրիումի նիտրատի քայքայմամբ
3) հեղուկ օդի թորմամբ
4) ջրածնի պերօքսիդի քայքայմամբ

6 **Ի՞նչ է օզոնը.**

1) թթվածնի իզոմերն է
2) թթվածնի իզոտոպն է
3) թթվածնի ալոտրոպ ձևափոխությունն է
4) թթվածնի և ջրածնի միացությունն է

7 **Որը՞ սուլֆիդային բնական միացություն չէ.**

1) ցինկի խաբուսակը
2) պիրիտը
3) գիպսը
4) կապարափայլը

8 **Ո՞ր շարք են ներառված կենսաածին տարրեր.**

1) արսենը և բիսմութը
2) ծարիրը և ազոտը
3) ազոտը և ֆոսֆորը
4) ֆոսֆորը և ծարիրը

9 **Ազոտական թթվի և քլորաջրածնական թթվի ի՞նչ հարաբերությամբ(մոլային) խառնուրդն են անվանում արքայաջուր.**

1) 1:1
2) 1:3
3) 1:2
4) 1:4

10 Ո՞ր ռեակցիայով են ստանում կրկնակի սուպերֆոսֆատ պարարտանյութը.

1) $Ca_3(PO_4)_2 + H_2SO_4 = Ca(H_2PO_4)_2 + 2CaSO_4$
2) $2NH_3 + H_3PO_4 = (NH_4)_2HPO_4$
3) $Ca(OH)_2 + H_3PO_4 = CaHPO_4 \cdot 2H_2O$
4) $Ca_3(PO_4)_2 + 4H_3PO_4 = 3Ca(H_2PO_4)_2$

11 Բերվածներից որը՞ ածխածնի տարաձևություն չէ.

1) ֆուլերենը
2) գրաֆիտը
3) կարբորունդը
4) ալմաստը

12 Ո՞ր ռեակցիաներն են ընկած ապակու արտադրության հիմքում.

1) $SiO_2 + Na_2CO_3 = Na_2SiO_3 + CO_2$
2) $Na_2SiO_3 + 2HCl = 2NaCl + H_2SiO_3$
3) $Na_2SiO_3 + CO_2 + H_2O = Na_2CO_3 + H_2SiO_3$
4) $SiO_2 + CaCO_3 = CaSiO_3 + CO_2$

1) 1, 2
2) 2, 3
3) 1, 4
4) 3, 4

13 Ո՞ր մետաղն է առավել տարածված բնության մեջ.

1) պղինձը
2) անագը
3) վոլֆրամը
4) ալյումինը

14 Բերված մետաղներից ո՞րն է նպատակահարմար ստանալ մետաղաթերմիայի եղանակով.

1) Na
2) K
3) Cr
4) Li

15 **Ո՞ր պնդում(ներ)ն է(են) ճիշտ:**

ա) կալիումը ներբջջային տարր է , աջակցում է սրտամկանի աշխատանքին:
բ) նատրիումի արտաբջջային տարր է, մասնակցում է օրգանիզմի նյութափոխանակման գործընթացներին:

Ո՞րն է ճիշտ պատասխանը.

1) ճիշտ է միայն ա-ն
2) ճիշտ է միայն բ-ն
3) երկուսն էլ ճիշտ են
4) երկուսն էլ սխալ են

16 **Ո՞ր պնդում(ներ)ն (է)են ճիշտ.**

ա) կրաջուր են անվանում կալցիումի հիդրօքսիդի թափանցիկ լուծույթը
բ) կրաջուր են անվանում կալցիումի հիդրօքսիդի սպիտակ կախույթը
գ) կալցիումի օքսիդի և ջրի փոխազդեցությունն անվանում են կրի մարում

1) ա, բ
2) բ, գ
3) ա, գ
4) բ

17 **Ո՞ր կարևորագույն օրգանական նյութերի մոլեկուլները ազոտ չեն պարունակում.**

1) ճարպերում
2) սպիտակուցներում
3) ֆերմենտներում
4) նուկլեինաթթուներում

18 **Ջրի ոչ կարբոնատային կոշտությունը վերացնելու համար այն պետք.**

1) մշակել սոդայով
2) մշակել կրաջրով
3) մշակել կրակաթով
4) եռացնել

19 **Ո՞ր նյութի վերամշակումից են ստանում կոքս.**

1) բնական գազի
2) նավթի
3) ուղեկից գազերի
4) քարածխի

20 **Սննդի հետ օրգանիզմ մտնող նյութերից ո՞րն է լրիվ ծախսվում (չի պահեստավորվում).**

1) ածխաջրեր
2) հանքային նյութեր
3) ճարպեր
4) սպիտակուցներ